սկեցի համբարել, թէ դեռ քանի հոգի քնած են մնացել: Իմ աչքերը կանգ առին գեղեցիկ պատկերի վրայ: Ես տեսնում էի այժմ նրա կիսամերկ թիկունքը միայն. երեսը շուռ էր տոած դէպի հակառակ կողմը: Նայում էի, երկար նայում էի այդ լիքը թիկունքի վրայ, որ սքանչելի կերպով լուսաւորոած էր ճրագի լուսով: Երկու ուրիշ աչքեր եւս դարձան դէպի այդ կողմը եւ ուշադրութեամբ նայեցին: Դրանք հարսի աչքերն էին: Նա ցած դրեց կարը, մօտեցաւ եւ ձեռքով բզեց օրիորդի կողքը: Նա զարթնեց: «այդ ինչպէ՞ս ես քնածէ, — լսելի եղաւ հարսի յանդիմանութիւնը: Օրիորդը ոչինչ չպատասխանեց, որովհետեւ նա չգիտէր, թէ ինչպէս էր քնած: Նա վերառեց իր մօտ դրած կարմիր շապիկը եւ շտապով հագաւ: Գեղեցիկ թիկունքը անհետացաւ իմ աչքից: «ես քեզ չասեցի՞, որ ինձ շուտ զարթեցնեսէ, — ասաց օրիորդը: «հիմայ էլ ուշ չէ», — պատասխանեց հարսը, կրկին գնալով եւ իր տեղը նստելով: Օրիորդը հագնոեցաւ եւ դուրս եկաւ սրահը: Խրճիթի կիսաբաց դռնից ես տեսնում էի, թէ ինչպէս լոացոեցաւ նա, թէ ինչպէս շապիկի լայն դրօշակով սրբեց երեսը, եւ թէ ինչպէս մատներով սանրեց, ուղղեց գլխի մազերը: Իր պչրանքը վերջացնելուց յետոյ, նա վեր առեց հարթ կտրած մի կոճղ, աթոռի նման դրեց տակին եւ նստեց իր ոստայնի առջեւ: ճարտար մատները սկսեցին արագութեամբ խաղալ գոյնզգոյն թելերի հետ: Ես հիացած նայում էի. սրահում վառոող ճրագը լուսաւորում էր նրա աշխատութիւնը: Նա մի գեղեցիկ գորգ էր հիւսում, մի ամբողջ տարի սկսել էր եւ մօտ ժամանակում վերջացնելու վրայ էր: Որպիսի՜ մեծ եռանդով աշխատում էր նա, որքա՜ն ոգեւորութեամբ շարժւում էին նրա ճարպիկ մատերը: Կարծես իւրաքանչիւր նկարը, իւրաքանչիւր գոյնը տպաւորում էին նրա սրտի մէջ նոյնպիսի գեղեցիկ նկարներ ապագայի, ջե՜րմ փափագով սպասող ապագայի մասին... Նա գործում էր եւ մեղմ ձայնով երգում էր: Նա նշանոած էր. նա այդ գորգը իր օժիտի համար էր պատրաստում: Այնտեղ, հարսանիքի ժամանակ, փեսայի տանը, բաց կանէին այդ գորգը եւ բոլոր գիւղացիք կը զարմանային նորահարսի շնորհքի եւ ճարտարութեան վրայ: Աքաղաղը երրորդ անգամ սկսեց խօսել: Այս անգամ զարթնեց տէր հօր որդին՝ օրիորդի հայրը: Նա շղթան բաց արեց ոտից եւ, հէնց իր անկողնի մէջ, նստած տեղում, հագնոեցաւ: Երբ վեր կացաւ, նա մի փոքր ջուր քսեց երեսին, որպէս թէ լոացոեցաւ: Յետոյ կանեփի երկար ձողը մոմի նման վառելով, ձեռին բռնած, դիմեց դէպի ախոռատունը՝ իր նժոյգին եւ միւս անասուններին նայելու: Նրա կինը, որ ճրագի առջեւ կար էր կարում, ամենեւին իր տեղից չշարժոեցաւ ամուսնու վեր կենալու ժամանակ: Կարծես նրան չէր ճանաչում: Գիւղացու ընտանեկան կարգերին անծանօթ մէկը, նրանց միմեանց կռոած կը համարէր: Բայց ինձ յայտնի էր, որ կինը իր ամուսնուն ոչ մի ծառայութիւն չէ ցոյց տալիս, երբ նրա հայրը կամ մայրը